

*Ընդհանուր տեղեկություն*

«Նորարարությունների տնտեսագիտություն» մասնագիտացմամբ կրթական ծրագիրը նոր մագիստրոսական ծրագիր է, որի նպատակն է՝ նորարարական և ստեղծագործական մտածողությամբ և կիրառական մասնագիտական կարողություններով օժտված մրցունակ մասնագետների պատրաստումը, որոնք ի վիճակի կլինեն բարդ ու լարված շուկայական մրցակցության պայմաններում լուծել բիզնեսի զարգացման ու տեխնոլոգիական արդիականացան, ինչպես նաև նոր, մրցունակ պրոդուկտների ստեղծման ու շուկայական առաջնորդման հետ կապված կառավարման բարդ խնդիրներ: Այս ծրագիրը նաև նպատակ ունի ուսանողներին տրամադրել տեսական գիտելիքներ և կիրառական մոդելներ, գործիքակազմեր և փորձարարական հմտություններ՝ նոր գաղափարները բիզնեսի հնարավորությունների վերածելու և կորպորատիվ նորարարության ստեղծագործական ջանքերը հունավորելու և կառավարելու համար:

«Նորարարությունների տնտեսագիտություն» մասնագիտացմամբ շրջանավարտները ստանալու են «**Տնտեսագիտության մագիստրոսի**» որակավորում: Այդ մասնագետները ի վիճակի կլինեն իրականացնել անալիտիկ-վերլուծական, հետազոտական, խորհրդատվական, նորաստեղծական, մտավոր սեփականության (գյուտերի, օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների, ապրանքային նշանների՝ բրենդների) կառավարման և նորույթների առևտրայնացան, ստարտափ ընկերությունների հմուտ կառավարման աշխատանքներ և իրենց մասնագիտության մեջ կատարելագործվելու համար կունենան անհրաժեշտ գիտելիքների, հմտությունների և կարողությունների պաշար:

«Նորարարությունների տնտեսագիտություն» մագիստրոսական ծրագիրը օգտակար ու շահեկան կարող է լինել ոչ միայն տնտեսագիտության և կառավարման ոլորտի բակալավր շրջանավարտների, այլև **տեխնիկական (ինժեներական), բնագիտական և իրավաբանական կրթություն** ունեցող մասնագետների համար, քանի որ նրանք, ովքեր ի վիճակի են ոչ միայն ստեղծել տեխնիկական նորույթներ ու նոր ապրանքներ, այլև կարողանում են դրանց հաջող շուկայական առաջխաղացումը կառավարել, կարող են դառնալ խիստ պահանջարկված մասնագետներ: Այս դեպքում՝ համատեղելով նորարարության հաջողության համար երկու՝ փոխլրացնող ու փոխպայմանավորող գիտելիքներն ու հմտությունները, դուք կարող եք դառնալ անգերազանցելի ձեր մրցակիցների նկատմամբ:

Մագիստրոսական ծրագիրը մշակվել է ծրագրի ղեկավարի կողմից (տնտեսագիտության թեկնածու, դոցենտ՝ Ա.Շ.Մարգարյան) արտասահմանյան համալսարանների, հետազոտական և նորարարական կենտրոնների և ընկերությունների հետ բազմամյա աշխատանքի ու համագործակցության արդյունքում և այդ տեսակետից համադրում է միջազգային լավագույն փորձը: Ծրագրի տևողությունը մեկ ու կես տարի է (երեք

կիսամյակ): Ուսման վարձավճարը մեկ տարվա համար 700.000 ՀՀ դրամ է, ամբողջ ծրագրի տևողության արժեքը՝ 1 մլն. 50 հազ. ՀՀ դրամ: Պարապմունքները կազմակերպվելու են՝ հաշվի առնելով ուսանողների ժամային նախընտրությունները՝ կամ ժամը 14.00-ից կամ ժամը 18.15-ից՝ շաբաթական երեք օր: Յուրաքանչյուր դասընթացի մոդուլից հետո ուսանողները հնարավորություն կունենան փորձառություն անցնել և իրականացնել հետազոտություններ նորարարություններին վերաբերող տարաբնույթ պետական և մասնավոր հաստատություններում:

### ***Մասնագիտության նկարագիրը***

Տնտեսության **մակրոմակարդակում** Նորարարությունների տնտեսագիտության մագիստրոսի որակավորում ունեցող մասնագետները կարող են օգտակար լինել մասնավորապես ընդհանուր և ոլորտային ինովացիոն քաղաքականության մշակման, գնահատման, վերլուծության ու կանխատեսմանն առնչվող աշխատանքներում, մրցակցային միջավայրի, հնարավոր ռիսկերի և հետևանքների գնահատման, զարգացման և տեխնոլոգիական փոխակերպման գործընթացների վերլուծության և մրցակցության կարգավորման քաղաքականության մշակման աշխատանքներում, ինչպես նաև՝ առանձին տեղական և միջազգային կազմակերպությունների ու պետական մարմինների կողմից մշակվող ռազմավարությունների ու ծրագրերի տնտեսական բաղադրիչի գնահատման, տեխնոլոգիական ռազմավարությունների հնարավոր արդյունքների ու փոփոխությունների կանխատեսման ծրագրերում:

ՀՀ տնտեսության **միկրոմակարդակում** «Նորարարությունների տնտեսագիտության» մագիստրոսի որակավորում ունեցող կադրերը կարող են արդյունավետորեն ներգրավվել ընկերություններում և կազմակերպություններում նորաստեղծական ծրագրերի և տեխնոլոգիական փոփոխությունների նախագծերի մշակման, նոր համակցություններ (կոմբինացիաների) ստեղծման և նրանց զարգացման ռեսուրսների համալրման, առաջադիմական փոփոխությունների կառավարման ու նրանց մրցակցային դիրքերի ամրապնդման աշխատանքներում:

«Նորարարությունների տնտեսագիտություն» մագիստրոսի որակավորում ունեցող մասնագետների նկատմամբ աշխատաշուկայում առկա է մեծ պահանջարկ, քանի որ նրանք առանցքային դերակատարում ունեն նորաստեղծական տնտեսական գործունեության տարբեր բնագավառներում իրականացվող փորձագիտական, հետազոտական, վերլուծական, նորարարական բնույթի աշխատանքներում: Մեծ պահանջարկը պայմանավորված է ՀՀ կառավարության որդեգրած տնտեսական բարեփոխումների ռազմավարության ինչպես նաև դրանից բխող տնտեսական քաղաքականության առաջնահերթություններով, որոնցից ամենաառանցքայիններից մեկը բարձրտեխնոլոգիական հենքի վրա հիմնված գիտելիքատար, նորարարական և մրցունակ տնտեսության կառուցումն է: Մյուս կողմից, տնտեսության մասնավոր հատվածի ընկերությունների մրցունակությունը պայմանավորող հիմնական գործոնը

նորարարությունների ամբողջական ցիկլը (գաղափարից մինչև առևտրայնացում) լիարժեքորեն պատկերացնող ու այդ շղթան կառավարելու ունակ մասնագետների առկայությունն է: Ծրագիրը հավակնում է պատրաստել հենց այդպիսի մասնագետներ:

### ***Ծրագրի շրջանավարտների աշխատանքի հնարավորությունները***

**«Նորարարությունների տնտեսագիտություն»** կրթական ծրագրի շրջանավարտները կարող են տնտեսագետ-վերլուծաբանի, տնտեսագիտական հարցերով խորհրդատուի, փորձագետի, հետազոտողի, կորպորատիվ վերլուծությունների, նորաստեղծությունների ու փոփոխությունների կառավարման մասնագետի պաշտոններ զբաղեցնել պետական հաստատություններում, տնտեսության իրական հատվածի կազմակերպություններում, արտադրական ձեռնարկություններում, կապի, հեռահաղորդակցությունների, ծառայությունների, շինարարության ոլորտի ընկերություններում, խորհրդատվական ընկերություններում, բիզնես ինկուբատորներում, գիտահետազոտական և նախագծային ինստիտուտներում, տեխնոլոգիաների փոխանցման կենտրոններում, ստարտափ ընկերություններում, պետական և մասնավոր վերլուծական կենտրոններում, ակադեմիական և այլ հետազոտական հաստատություններում, միջազգային կազմակերպություններում:

**«Նորարարությունների տնտեսագիտություն»** մասնագիտական կրթական ծրագրի պատասխանատու կառույցը ՀՊՏՀ «Ինովացիոն և ինստիտուցիոնալ հետազոտություններ» գիտաուսումնական լաբորատորիան է (ղեկավար՝ տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Ա.Շ.Մարգարյան), որը հանձն է առնում միջազգային չափանիշներով մրցունակ կադրերի պատրաստման աշխատանքը: Ծրագրում դասավանդելու են մասնագիտական բարձր որակներ, ոլորտում բարձր հեղինակություն և փորձառություն ունեցող մասնագետներ: